ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԻՐՃ ՀԱՎԱՔԱԾՈՒ

1. Գառնիի տաճար



Գառնիի հեթանոսական տաճարը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղում, Ազատ գետի աջ ափին: Տաճարը կառուցվել է Տրդատ Ա թագավորի օրոք, 1-ին դարում: Այն նվիրված է եղել արևի աստված Արեգ-Միհրին:

Ըստ Մովսես Խորենացու տաճարը կառուցել է Հայկ նահապետի ծոռ Գեղամը, ով իբրև իր թոռ՝ Գառնիկի անունով էլ այն կոչել Գառնի:

1679 թվականին Գառնու տաճարն ավիրվել է ուժեղ երկրաշարժի հետևանքով: Վերականգնվել է 1969-1974 թվականներին, ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանի ղեկավարությամբ:

---

2. Էջմիածնի մայր տաճարը



Էջմիածնի մայր տաճարը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում: Այն Հայ Առաքելական եկեղեցու Էջմիածնի կաթողիկոսության գլխավոր կրոնական կառույցն է: Մայր տաճարը կառուցվել է 301-303 թվականներին Տրդատ Գ-ի օրոք: Ըստ Ագաթանգեղոսի Հայոց պատմության՝ գիշերային մթության մեջ Գրիգոր Լուսավորիչը, մտորումներով տարված, մի հիասքանչ տեսիլք է տեսնում, թե ինչպես Աստծո Միածին որդին իջնում է երկնքից, ոսկե մուրճով հարվածում է գետնին՝ ցույց տալով այն տեղը, որտեղ պետք է կառուցվեր Սուրբ եկեղեցին: Մայր տաճարը դարերի ընթացքում բազմիցս վերակառուցումների է ենթարկվել:

3. Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում: Այն կառուցվել է 618 թվականին՝ Հռիփսիմյան կույսերի նահատակության տեղում: 1653 թ.-ին արմտյան մուտքի դիմաց կցակառուցվել է զանգակատուն: Ավագ խորանի տակ գտնվում է Սուրբ Հռիփսիմեի գերեզմանը:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին ներքուստ խաչաձև, արտաքուստ՝ ուղղանկյունաձև գմբեթավոր կառույց է: Այն ունի հանգիստ և վեհաշուք կերպար:

---

4. Զվարթնոցի տաճարը

Զվարթնոցի տաճարը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում: Կառուցվել է Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի պատվերով 641-661 թվականներին՝ այն վայրում, որտեղ միմյանց են հանդիպել հայոց արքա Տրդատ Գ-ն և Սուրբ Գրիգոր Լուսավորիչը:

Զվարթնոցի տաճարն, ըստ Թորոս Թորամանյանի վերակազմության նախագծի, եռահարկ, բոլորաձև, կենտրոնագմբեթ խաչաձև կառույց էր: Արտաքինից կառույցն ունեցել է հարուստ դեկորատիվ հարդարանք՝ քանդակազարդ կամարաշարեր, կլոր պատուհաններ՝ զարդաքանդակ գոտիներով, առաջին հարկաշարի ողջ պարագծով պտտվող շքեղ զարդագոտի: Ներքին հարդարանքում տեղ ենգտել քանդակազարդ հյուսածո գնդաձև խոյակները և հայկական ճարտարապետության մեջ եզակի արծվախոյակներով չորս սյուները, որոնք ասես իրենց բացված թևերի վրա են կրում երկնակամարը: Տաճարը կանգուն է մնացել մինչև 10-րդ դարը: Գագիկ Ա Բագրատունու օրոք Անիում կառուցվել է Զվարթնոցի կրկնօրինակը՝ Գագկաշենի եկեղեցին, որը նույնպես ավերվել է:

5. Ամբերդ ամրոցը

Ամբերդ ամրոցը կառուցվել է 11-13-րդ դարերում: Այն գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական գյուղից դեպի հյուսիս, Արքաշեն և Ամբերդ գետերի միացման տեղում՝ եռանկյունաձև անառիկ հրվանդանի վրա: Ամրոցի պարիսպները, դղյակը և հավանաբար նաև բաղնիքը կառուցվել են Բագրատունիների օրոք, իսկ իշխան Վահրամ Պահլավունին 1026 թվականին կառուցել է Սուրբ Աստվածածին կամ Վահրամաշեն եկեղեցին:

---

6. Կեչառիսի վանական համալիրը

Կեչառիսի վանական համալիրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաք հյուսիս-արևմտյան մասում: Այն կառուցվել է 11-13-րդ դարերում և հանդիսացել է միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոններից մեկը: Կեչառիսում ապրել և գործել են հայտնի գիտնականներ և քաղաքական գործիչներ: Վանական համալիրը բաղկացած է չորս եկեղեցիներից, գավթից և երկու մատուռից: Ամենամեծը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, որն ըստ պահպանված արձանագրության կառուցվել է Գրիգոր Մագիստրոսի կողմից: Հետագայում արևմտյան կողմից կցակառուցվել է գավիթը: Մյուս եկեղեցիները Կաթողիկեն և Սուրբ Նշանը գտնվում են համալիր տարածքում, որը հարուստ է նաև գեղազարդ խաչքարերով: Վանական համալիրից առանձին կառուցվել է Սուրբ Հարություն եկեղեցին: Կեչառիսի վանական համալիրում է աշխատել նաև միջնադարյան հայտնի վարպետներից Վեցիկ ճարտարապետը:



7. Գեղարդի վանական համալիրը



Գեղարդավանքը կամ Այրիվանքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում: Այստեղ է պահվել Սուրբ գեղարդը, որով հռոմեացի զինվորը ծակել էր խաչված Քրիստոսի կողը: Այն Հայաստան էր բերել քրիստոնեության քարոզիչներից Թադեոս առաքյալը: Այժմ Սուրբ Գեղարդը գտնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանում: Գեղարդավանքը միջնադարյան Հայաստանի առավել ինքնատիպ և նշանավոր վանքերից է: Այն հիմնականում կառուցապատվել է 13-րդ դարից սկսած: Իր վիմափոր և վերգետնյա եկեղեցիներով, դամբարանով, մատուռով, հարյուրից ավելի խցերով, ժայռերին փորագրված և առանձին կանգնեցված գեղաքանդակ խաչքարերով վանքը հիրավի, ճարտարապետության և բնության ներդաշնակության անկրկնելի օրինակ է:

---

8. Հաղպատի վանական համալիրը

Հաղպատի վանական համալիրը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Հաղպատ գյուղում: Այն հիմնադրվել է 10-րդ դարի վերջին, իսկ կառուցապատումն ավարտվել է 13-րդ դարում: Այն եղել միջնադարյան Հայաստանի հոգևոր մշակութային, գիտաուսումնական կենտրոն: Վանքը հայտնի է նաև որպես գրչության կենտրոն: Վանքում և նրա տարածքում կան բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր, որոնց թվում է նաև խաչքարային արվեստի լավագույն նմուշներից <<Ամենափրկիչ>> խաչքարն իր բարձրարվեստ պատկերաքանդակներով: Հաղպատի վանքի ամենագողտրիկ հուշարձաններից է զանգակատունը՝ կառուցված 13-րդ դարում: Այն երկհարկ վերնասլաց կառույց է, որն ավարտվում է սյունազարդ զանգաշտարակով:

9. Նորավանք վանական համալիրը

Նորավանք վանական համալիրը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի Ամաղու գյուղից հարավ-արևելք: Այն կառուցվել է 13-14-րդ դարերում:

Նորավանքը միջնադարյան Հայաստանի հոյակերտ հուշարձաններից է՝ ներդաշնակորեն ձուլված շրջակա գեղատեսիլ միջավայրին, և դարձել հոգևոր, կրթական և մշակութային կենտրոն: Նորավանքի Սուրբ Աստվածածին եռահարկ եկեղեցին, որը հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից է, վերագրվում է մեծատաղանդ ճարտարապետ, քանդակագործ և մանրանկարիչ Մոմիկին: Վանական համալիրի կառուցմանը մասնակցել են նաև ճարտարապետներ Սիրանեսը և Գրիգորիսը: Նորավանքի կառույցներն առանձնանում են շքեղ և հարուստ գեղարվեստական հարդարանքով՝ բազմազան զարդաքանդակներով և պատկերաքանդակներով:

---

10. Տաթևի վանական համալիրը

Տաթևի վանական համալիրը գտնվում է Սյունիքի մարզի Տաթև գյուղի հարավում՝ Որոտան գետի վտակի աջափնյա եզերքին: Ավանդության համաձայն՝ վանքը կոչվել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի անունով:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի վանքի առաջին եկեղեցին կառուցվել է 4-րդ դարում: Վանքի հիմնական կառուցապատումը սկսվում է 9-րդ դարից, երբ 895 թվականին սկսվեց Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցումը: 9-րդ դարում Տաթևի վանքը Բագրատունյաց Հայաստանի ամենախոշոր ու նշանավոր վանքն էր. ունեցել է շուրջ 500 միաբան, վարդապետարան: Վանքի կենտրոնում է տեղադրված ութ մետր բարձրությամբ ճոճվող հուշասյունը, որը պսակված է խաչքարով և նվիրված է Սուրբ Երրորդությանը:

11. Խոր Վիրապի վանքը

Խոր Վիրապի վանքը գտնվում է Հայաստանի Արարատի մարզի Լուսառատ գյուղից մոտ 1 կմ հյուսիս-արևմուտք: Այն 17-րդ դարի վանք-ամրոց է Արաքս գետի ձախ կողմում Լուսառատ գյուղի մոտակայքում, պատմական Արտաշատ քաղաքի բլուրներից մեկի վրա: Եղել է Հայոց հանրահայտ ուխտատեղիներից՝ կապված Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Ըստ Ագաթանգեղոսի՝ Տրդատ Գ Մեծը քրիստոնյաների հալածանքի շրջանում Գրիգոր Լուսավորչին նետել է Արտաշատի արքունական բանտի գուբը, որտեղ Լուսավորիչն անցկացրել է մոտ 14 տարի:

---

12. Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցին

Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցին գտնվում է Վանա լճի Ախթամար կղզում, պատմական Հայաստանի Վասպուրական նահանգում, այսօրվա Թուրքիայի տարածքում: Այն Ախթամարի վանական համալիրի գլխավոր եկեղեցին է, կառուցվել է 915-921 թվականներին միջնադարի հանճարեղ ճարտարապետ Մանուելի կողմից: Եկեղեցու պատերն ամբողջովին քանդակազարդ են, որոնք ներկայացնում են ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ կյանքի դրվագներ: Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցին ճարտարապետության և քանդակի ներդաշնակ սինթեզի անկրկնելի գլուխգործոց է:

13. Կառավարական շենքը

Կառավարական շենքը գտնվում է Երևանի գլխավոր՝ Հանրապետության հրապարակում: Հեղինակը խորհրդահայ ճարտարապետության հիմնադիր, հայ մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն է: Կառույցի շինարարությունը սկսվել է 1926 թվականին, սակայն ավարտել է վարպետի որդին՝ Գևորգ Թամանյանը 1940 թ.վականին: §Կառավարական տան¦ նախագծի համար 1942 թվականին Ալեքսանդր Թամանյանին հետմահու շնորհվել է ԽՍՀՄ պետական մրցանակ: Այս կառույցում ճարտարապետը համադրել է դասական ճարտարապետության սկզբունքները ազգային ակունքներից բխող զարդաքանդակներով: Այս կառույցը հիմք հանդիսացավ հրապարակի մյուս շենքերի, ինչպես նաև ամբողջ հրապարակի օվալաձև հորինվածքի համար:

---

14. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը

Օպերայի և բալետի թատրոնի շենքը կառուցվել է 1926-1939 թվականներին, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի նախագծով: Այս կառույցի նախագիծը Փարիզում 1937 թվականին կայացած համաշխարհային ցուցահանդեսում շահել է Մեծ ոսկե մեդալ (Grand prix): Շենքն իրականացված է բաց մոխրագույն հայկական գրանիտով: Այս կառույցում մեկ ընդհանուր ծավալի մեջ են միավորված թատերական և համերգային երկու դահլիճները: Հատակագիծն ունի սիմետրիկ կառուցվածք: Միևնույն առանցքի երկու կողմերում տեղադրված են կիսաշրջանաձև երկու դահլիճները՝ թատերական և համերգային:

15. Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը

Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը գտնվում է Երևանի կենտրոնում՝ Կասկադ համալիրի առջևում: Այն տեղադրվել է 1974 թվականին: Ճարտարապետը Սեդա Պետրոսյանն է, քանդակագործը՝ ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Արտաշես Հովսեփյանը: Հուշարձանի բարձրությունը 3 մետր է: Այն պատրաստված է բազալտից և գրանիտից: Ալեքսանդր Թամանյանի հուշարձանի պատվանդանի աջ անկյունում գծագրված է Երևանի հատակագիծը, որի մոտ փորագրված է Թամանյանի մասին Եղիշե Չարենցի հետևյալ տողը. «Նա տեսել է երևի արևային մի քաղաք»:

---

16. Կասկադ համալիրը

Կասկադը ճարտարապետական-կոթողային համալիր է Երևանում: Համալիրում գտնվում են ցուցասրահներ, շատրվաններ, ծաղկանոցներ և հարթաքանդակներ: Կասկադ համալիրի աստիճանների թիվը 572 է: Կասկադ համալիրի գաղափարի նախահեղինակը ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն է, սակայն իրականացվեց ճարտարապետներ Ջիմ Թորոսյանի. Սարգիս Գուրզադյանի և Ասլան Մխիթարյանի նախագծով: Կառուցման աշխատանքներն ընթացան 1976-1988 թվականներին: Կասկադ համալիրի վերջնական ավարտի մեջ մեծ ներդրում ունեցավ ամերիկահայ մեծ գործարար և բարեգործ Ջերարդ Լ. Գաֆէսճեանը: Նրա շնորհիվ 2009 թվականին նոյեմբերի 8-ի պաշտոնական բացումով Կասկադ համալիրը վերափոխվեց ժամանակակից արվեստի կենտրոնի: Այժմ այստեղ է գտնվում Գաֆէսճեան արվեստի կենտրոնը:

17. Երիտասարդական մետրոյի կայարանը

Երիտասարդական մետրոյի կայարանը գործարկվել է 1981 թվականին մարտի 7-ին Երևանի մետրոպոլիտենի թողարկման առաջին փուլում՝ «Բարեկամություն»-«Սասունցի Դավիթ» հաղորդագծի բացման ժամանակ: Ճարտարապետը Ստեփան Քյուրքչյանն է: Ներքին հարդարանքը կատարված է բաց մոխրագույն մարմարով: Սպասասրահի դիմացի պատին քանդակագործ Ռուզան Քյուրքչյանի հեղինակած «Երիտասարդություն» խորաքանդակն է: Վերերկրյա շինությունը յուրահատուկ կառուցվածք ունի: Շենքից անկյան տակ դուրս է գալիս լայն, դիմացից ապակեպատ խողովակ, որը կարծես շարժասանդուղքների շարունակությունը լինի:

18. Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը (Ծիծեռնակաբերդ)

1965 թ. մարտի 16-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը որոշում է կայացրել «1915 վականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու համար կոթող կառուցելու» մասին: Հայտարարվել է մրցույթ: Ներկայացված 70 նախագծերից հաղթող է ճանաչվել Արթուր Թարխանյանի և Սաշուր Քալաշյանի նախագիծը: Հուշահամալիրը կառուցվել է ռեկորդային արագությամբ՝ երկու տարում: Հուշարձանի շինարարությունն ավարտվեց 1967 թ.: Ձախ կողմից ձգվում է 100 մետր երկարությամբ հուշապատը: Կենտրոնում գտնվում է 30 մ տրամագծով «հավերժության տաճարը»՝ դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե մույթերով: Այցելուներին դեպի «տաճարի» սրահը և հավերժական ջահն են տանում հարթակից իջնող անսովոր բարձր աստիճանները, որոնք կարծես պարտադրում են խոնարհվել Եղեռնի զոհերի հիշատակի առջև: Քիչ հեռու վեր է խոյանում 40 մ բարձրությամբ «Վերածնվող Հայաստան» հուշասյունը՝ խորհրդանշելով հայ ժողովրդի վերածննդի գաղափարը:

---

19. Արարատ տրեստի գինու գործարանը

Արարատ տրեստի գինու գործարանի շենքը Ռաֆայել Իսրայելյանի լավագույն կառույցներից է: Շինարարությունը, սկսվել է 1938 թվականին (առաջին փուլը, համահեղինակ՝ Գ. Քոչար) նախկին Շուստովի ոչ մեծ կոնյակի գործարանի տեղում: Այդ ժամանակ կառուցվել է միայն մի մասնաշենքը՝ կենտրոնական բլոկից աջ, Հրազդան գետի ափին, երկրորդ հերթին (1945-63 թթ.)՝ կենտրոնական մասնաշենքը: Այն իրականացված է կիսասրբատաշ բազալտից, դրանով իսկ ավելի մեծացնելով շրջակա միջավայրի հետ ներդաշնակությունը: Դեպի Հաղթանակի կամուրջը բացվող ճակատը վարպետը մշակել է երեք հսկայական կամարաբացվածքներով, որոնց մասշտաբն ընդգծելու համար դրանց մեջ տեղադրել է երեք ոչ մեծ ծավալային շքամուտքեր՝ գրանիտե գինու կարասներով՝ ծածկված ժանեկազարդ քանդակով:

20. Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի մոտ: Այն կառուցվել է այն վայրում, որտեղ տեղի է ունեցել Սարդարապատի ճակատամարտը: Համալիրի կազմում մտնում է հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանը, որը նվիրված է 1918 թվականին թուրքական կանոնավոր բանակի նկատմամբ հայ ժողովրդի տարած հաղթանակին: Ճարտարապետը Ռաֆայել Իսրայելյանն է, քանդակագործները՝ Արշամ Շահինյանը, Սամվել Մանասյանը և Արա Հարությունյանը: Համալիրը հիմնականում Արմավիրի կարմիր տուֆով է կառուցված: Հատկապես անկրկնելի են մուտքի թևավոր ցուլերը և վեհասքանչ հաղթական զանգերը: «Զանգակատունը» (35 մ բարձրությամբ) հանդիսանում է համալիրի հորինվածքի դոմինանտը: Համալիրի հանդիսավոր բացումը կատարվել է Սարդարապատի ճակատամարտում հայ ժողովրդի հաղթանակի 50-ամյակի կապակցությամբ՝ 1968 թվականի մայիսին:

---

21. Մատենադարանի շենքը

Երևանի Մատենադարանի շենքը հին ձեռագրերի և փաստաթղթերի պահպանման և ուսումնասիրման, ձեռագրերի պահպանման աշխարհի ամենահարուստ կենտրոններից մեկն է: Այն Հայերեն ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցն է: Շենքը կառուցված է մոխրակապույտ բազալտից՝ դեպի Երևան նայող բլրի վրա: Ճարտարապետ Մարկ Գրիգորյանն այն սկսել է նախագծել 1940 թվականին, որը, սակայն, դադարեցվեց Հայրենական մեծ պատերազմի պատճառով: Նախագծման աշխատանքները վերսկսվեցին 1944 թվականին: Շենքը նախագծելիս Մարկ Գրիգորյանը հայկական ճարտարապետական ավանդույթները փորձել է միավորել այդ ժամանակվա ձեռագրերի պահպանման տեխնիկայի հետ: Գլխավոր ճակատի խորշերի մեջ հայ մշակույթի և գիտության անվանի գործիչների արձաններ են, իսկ դիմացը՝ Մեսրոպ Մաշտոցի և նրա աշակերտ՝ Կորյունի արձանախումբն է տեղադրված: 1962 թվականին Մատենադարանն անվանակոչվել է Մեսրոպ Մաշտոցի անունով:

22. Կոնյակի գործարանի շենքը

Երևանի Կոնյակի գործարանի շենքը կառուցվել է 1944-52 թվականներին, Հովհաննես Մարգարյանի նախագծով: Դա հեղինակի հետպատերազմյան շրջանի լավագույն ստեղծագործություններից է: Գտնվում է մայրաքաղաքի ամենագողտրիկ հանգույցներից մեկում՝ Հրազդան գետի աջ և ձախ ափերը միացնող Հաղթանակի կամուրջի առանցքի ուղղությամբ գտնվող բարձունքի վրա՝ դիմահայաց Արարատ տրեստի գինու մառանների շենքին: Հեղինակը կարողացել է, արտադրական պրոցեսների ճիշտ կազմակերպմանը զուգընթաց, կառույցի ճարտարապետական կերպարը համահունչ ձևով ներդաշնակեցնել և՝ շրջապատի ճարտարապետական կառույցների, և՛ քաղաքաշինական միջավայրի, և՛ շրջակա գողտրիկ բնության հետ:

---

23. Երևանի «Այրարատ» (Ռոսիա) կինոթատրոնը

1979 թ. Կինոթատրոնի նախագծի համար ճարտարապետներն արժանացել են ԽՍՀՄ ախարարների խորհրդի մրցանակի : Սեփականաշնորհվել է 2004 թ.: 2006 թ. Կառույցի մի ատվածում բացվել է «Ռոսիա » առևտրամշակութային կենտրոնը, որտեղ իրականացնում է ենտրոնի միայն մեկ գործառույթը՝ առևտուրը:

24. Ազգային ժողովի շենքը

Ազգային ժողովի շենքի կառուցումը սկսվել է 1948 թվականին և ավարտվել է 1950 թվականին: Շենքի գլխավոր ճարտարապետն է Մարկ Գրիգորյանը: Նա եղել է Երևանի գլխավոր ճարտարապետը, այնուհետեւ Հայարդնախագիծ ինստիտուտի տնօրենը: Շենքը կառուցված է Ալավերդու ֆելզիտյան նուրբ կաթնագույն, բաց նարնջագույն սրբատաշ տուֆով, որի շնորհիվ այն առանձնանում է շրջակա կանաչ միջավայրից: Դասական ճարտարապետության միջոցներով լուծված ճակատի կոմպոզիցիան ընդհանուր առմամբ շենքին տալիս է հասարակական կառույցի տեսք:

---

25. Երևանի Քաղաքապետարանի շենքը

ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1984 թվականին սկսվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի վարչական նոր շենքի շինարարությունը: Ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հեղինակությամբ: Շինարարական աշխատանքները դադարեցվել են 1991 թվականին:

Քաղաքապետարանի նոր շենքը 2003 թվականին վերանախագծվել է՝ պահպանելով Ջիմ Թորոսյանի նախագծի անաղարտությունը, միաժամանակ հարմարեցվելով ժամանակի պահանջներին: Կոռույցը 2004 թվականի նոյեմբերի 26-ին հանձնվել շահագործման:

26. Երիտասարդական պալատը

Երիտասարդական պալատը (ժողովրդական լեզվում տարածված է նաև «Կուկուրուզնիկ» անվանումը), նախկին հյուրանոց է և երիտասարդական միջոցառումների համար նախատեսված համալիր: Կառուցվել է 1979 թվականին Ճարտարապետներն են Արթուր Թարխանյանը, Սպարտակ Խաչիկյանը, Մարտին Զաքարյանը և Հրաչյա Պողոսյանը: Կառույցն քանդվել է 2005 թվականին:

---

27. Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համլիր



Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համլիրի Ճարտարապետներն են Կորյուն Հակոբյանը, Արթուր Թարխանյանը, Սպարտակ Խաչիկյանը, Հրաչյա Պողոսյանը և Գևորգ Մուշեղյանը: Այն Երևանի ամենամեծ մարզահամերգային կառույցն է: Գտնվում է Ծիծեռնակաբերդի բլրալանջին՝ Երևանի արևմտյան մասում՝ Հրազդան գետի աջափնյակում: Համալիրը բաղկացած է 2 մեծ սրահներից՝ մարզական և համերգային: Մարզահամերգային առաջին դահլիճը՝ մարզադահլիճը, շահագործման է հանձնվել դեռևս 1983 թ., իսկ երկրորը՝ 984 թ. Հոկտեմբերի 13-ին:

28. «Մոսկվա» կինոթատրոնի շենքը

«Մոսկվա» կինոթատրոնը կառուցվել է 1933-37 թվականներին Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու տեղում՝ Աբովյան և Թումանյան փողոցների խաչմերուկում: Ճարտարապետներն են Գևորգ Քոչարը և Տիգրան Երկանյանը: Կինոթատրոնի շենքն իր ծավալատարածական հորինվածքով ենթարկվում է տեղում արդեն կազմավորված քաղաքաշինական միջավայրին, սիմետրիկ է «Երևան» հյուրանոցի կորագիծ ճակատին և նրա հետ ստեղծում է կիսաշրջան ոչ մեծ հրապարակ՝ դեպի որն էլ բացվում է շենքի գլխավոր ճակատը: Այն առաջին երկդահլիճ կինոթատրոններից էր խորհրդային ճարտարապետության մեջ: Օգտագործված են երկու տեսակի քարեր՝ մոխրագույն բազալտ և նոյեմբերյանի դեղնագույն ֆելզիտ տուֆը:

---

29. «Մայր Հայաստան» հուշարձանը Գյումրիում

«Մայր Հայաստան» հուշարձանը գտնվում է Գյումրիի հարավ-արևմտյան մասում՝ Սև բերդին կից: Տեղադրվել է 1975 թվականին: Հուշարձանը կազմված է երկու մասից՝ 21 մետր բարձրությամբ պատվանդանից և 20 մետր բարձրությամբ արձանից: Հուշարձանի հեղինակների՝ ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արա Սարգսյանի և վաստակավոր ճարտարապետ Ռաֆայել Եղոյանի համատեղ մտահաղացմամբ հուշարձանի երկու բաղկացուցիչ մասերը իրենց դիրքով և չափերով ներդաշնակվում են միմյանց հետ և ներկայանում են համակցված ամբողջությամբ:

30. Կամերային համերգասրահ

Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տունը կառուցվել է 1977 թվականին՝ ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի կողմից։ Շենքի գեղարվեստական լուծումը կատարված է զբոսայգու պուրակային ճարտարապետությանը համահունչ։ Կամերային երաժշտության տանը տեղի են ունենում բազմաթիվ համերգներ և փառատոներ հայ և արտասահմանյան համբավավոր երաժիշտների մասնակցությամբ։ Շենքն ունի 300-տեղանոց դահլիճ, որտեղ անցկացվում են համերգներ, փառատոներ, հոբելյաններ, հանդիպումներ, երեկոներ, էքսպոներ, շնորհանդեսներ։

31. Քեոփսի բուրգը

Եգիպտական բուրգերը գտնվում են Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեից հարավ: Ամենամեծը՝ Քեոփս փարավոնի բուրգն է, որը կառուցվել է մ.թ.ա. մոտ 2580 թվականին: Սկզբնական բարձրությունը կազմել է 146.6 մ, հիմքի կողմի երկարությունը՝ 233 մ, կառուցված է 2300 քարաբեկորներից, որոնցից յուրաքանչյուրը կշռում է միջին հաշվով 2,5 տոննա: Այն Անտիկ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն է, դրանցից հնագույնն ու միակը, որ պահպանվել է մինչև մեր օրերը: Ըստ հույն ճանապարհորդ, պատմիչ Հերոդոտոսի՝ բուրգի կառուցումը տևել է 20 տարի, աշխատանքներին մասնակցել է 100 հազար ստրուկ:

---

32. Ստոունհենջ

Սթոունհենջը մեգալիթյան խոշոր կառույց Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնից շուրջ 130 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Սոլսբերի քաղաքի մոտ, Էյվոն գետի ձախ ափին: Երկար տարիներ է, ինչ այն իր վրա է բևեռում հնագետների ուշադրությունը: Այն անվանել են Արևի տաճար, հեթանոսական տաճար: Սթոունհենջ անկասկած հնագույն տաճար է, որը հավանաբար առնչվում է արևի պաշտամունքի հետ և խորհրդանշում է երկնակամարը: Ըստ որոշ հետազոտողների՝ Սթոունհենջը եղել է հնագույն աստղադիտարան: Սթոունհենջից համեմատաբար քիչ բան է մնացել, ավերել են և՛ ժամանակը, և՛ մարդը:

33. Աթենքի ակրոպոլիսը

Աթենքի Ակրոպոլիսը անտիկ միջնաբերդ է, որը տեղակայված է Աթենք քաղաքից վեր գտնվող ժայռոտ բարձունքի վրա և իր մեջ ներառում է ճարտարապետական և պատմական կարևոր նշանակություն ունեցող հնադարյան մի քանի կառույցների ավերակներ, որոնցից ամենահայտնին Պարթենոնի տաճարն է: Ակրոպոլիսի տարածքում են գտնվում նաև Էրեքթեոնի և Նիկե Ապտերոսի տաճարները:

34. Պարթենոնի տաճարը

Պարթենոնի տաճարը հունական և համաշխարհային ճարտարապետության գլուգործոցներից մեկն է, կառուցվել է մ.թ.ա. 447-432 թվականներն: Ճարտարապետներն են Իկտինիոսը ու Կալիկրատեսը, իսկ քանդակների հեղինակը հանճարեղ քանդակագործ՝ Ֆիդիասը: Այն Աթենքի Ակրոպոլիսի գլխավոր տաճարն է և նվիրված է Աթենքի հովանավոր աստվածուհուն՝ Աթենաս Պարթենոսին

---

35. Կոլիզեումի ամֆիթատրոնը Հռոմում

Կոլիզեումի ամֆիթատրոնը գտնվում է Իտալիայում՝ Հռոմ քաղաքի կենտրոնում: Այն օվալաձև է: Այն երբևէ կառուցված ամենամեծ ամֆիթատրոնն է: Կոլիզեումը գտնվում է Հռոմի Ֆորումի արևելքում: Կառուցումը սկսել է Վեսպասիանոս կայսրը 70 թվականին, ավարտել է իր իրավահաջորդ ու ժառանգ Տիտոսը՝ 82 թվականին: Համարվում է, որ Կոլիզեումը կարող է տեղավորել մինչև 80000 հանդիսատես: Այն օգտագործվել է գլադիատորական մրցույթների, հանրային ներկայացումների, կենդանիների որսերի, մահապատիժների, հայտնի մարտերի կրկնությունների և հռոմեական դիցաբանության վրա հիմնված դրամաների համար:

36. Սուրբ Ղազար կղզին

Սուրբ Ղազար կղզին գտնվում է հյուսիսային Իտալիայում, Վենետիկի ծոցի մերձավոր ջրերում: Այն պատկանում է Մխիթարյան միաբանությանը, այդ միաբանության մայրավանքն է: Կղզին հիմնադրվել է տասներկուերորդ դարում, ստանալով իր անունը սուրբ Ղազար, ով հովանավորն էր բորոտավարակների: Լքված էր տասնվեցերորդ դարում, իսկ 1717 թվականին Վենետիկի իշխող խորհրդի կողմից այն տրվել է մի խումբ հայ վարդապետերի: Մխիթարը և նրա տասնյոթ վարդապետերը կառուցել են վանքը, վերականգնել հին եկեղեցին և ընդլայնել կղզին իր ներկա 30000 քմ, մոտ չորս անգամ ավել իր նախնական տարածքից:

---

37. Պիզայի աշտարակը

Պիզայի թեք աշտարակը (կամպանելլան) գտնվում է Իտալիայի Պիզա քաղաքի տաճարային համակառույցում: Հայտնի է իր թեքությամբ: Աշտարակի շինարարության համար պահանջվել է մոտ 200 տարի, այն սկսվել է 1173 թվականին և երկու ընդմիջումներով շարունակվել է մինչև 1360 թվականը: Նախագծի հեղինակն էր Բոնանո Պիզանոն: Աշտարակի բարձրությունը գետնից 56.67 մ է, ունի 296 աստիճան:

38. Փարիզի Աստվածամոր տաճարը

Փարիզի Աստվածամոր տաճարը ֆրանսիական գոթական ճարտարապետության գլուխգործոցներից մեկն է: Տաճարի շինարարությունը սկսվել է 1163 թ., իրականացվել է տարբեր փուլերով և ավարտվել միայն 14-րդ դարի կեսերին: Տաճարն արևմտյան կողմում ունի երեք քանդակազարդ շքամուտք: Հարուստ է բազմաթիվ քանդակներով և վիտրաժներով:

---

39. Տրևի շատրվանը Հռոմում

Հռոմը հաճախ անվանում են շատրվանների մայրաքաղաք, որոնց արքան լեգենդար Տրևին է: Այն հանդիսանում է Իտալիայի մայրաքաղաքի ամենակարևոր տեսարժան վայրերից մեկը: Շատրվանի շինարարությունը սկսվել է 1732 թվականին ճարտարապետ Նիկոլո Սալվիի կողմից: Սակայն, ի սկզբանե, նախագծով զբաղվել է ճարտարապետ և քանդակագործ Լորենցո Բերնինին 17-րդ դարի կեսերին: Շատրվանը բարոկկո ոճի է, ունի դինամիկ քանդակներ, արհեստական ժայռաբեկորներ և ջրվեժներ: Շատրվանի հետ կապված կան մի շարք հավատալիքներ: Օրինակ, այնտեղ մետաղադրամ նետողին անպայմանորեն սպասվում է վերադարձ Հռոմ, երկու մետաղադրամ նետողին՝ սիրային հանդիպում, երեք մետաղադրամ նետողին՝ հարսանիք, չորս մետաղադրամ նետողին՝ հարստություն, հինգ մետաղադրամ նետողին՝ ամուսնալուծություն: Զարմանալի չէ, որ դա շատրվանին հնարավորություն է տվել հավակնել աշխարհի ամենաշահութաբեր շատրվաններից մեկի տիտղոսին: Նրա տարեկան եկամուտը քաղաքի գանձարանը համալրում է մոտ 700.000 եվրոյով:

40. Անգլիական գոթական Յորքի տաճարը

Յորքի Սուրբ Պետրոսի տաճարը գտնվում է Մեծ Բրիտանիայի Յորք քաղաքում: Հայտնի է որպես Յորքի Մայր տաճար: Այն համարվում է Հյուսիսային Եվրոպայի երկրորդ մեծ տաճարը, որը կառուցվել է գոթական ճարտարապետական ոճով: Տաճարի կառուցումը սկսվել է 1230 թվականին և ավարտվել 1472 թվականին: Արևմտյան մասում Մեծ Արևմտյան պատուհանն է, որը հայտնի է որպես «Յորքշիրի սիրտ»:

---

41. Սուրբ Պետրոսի տաճարը

Սուրբ Պետրոսի տաճարը կառուցվել է կաթոլիկ եկեղեցու հիմնադիր Պետրոս առաքյալի գերեզմանի վրա ավելի վաղ կառուցված եկեղեցու տեղում: Նոր հոյակերտ տաճարի կառուցման գաղափարը ծագել էր դեռևս Նիկոլայ V պապի ժամանակ, երբ հաստատվեց, որ հին հռոմեական բազիլիկային քանդվելու վտանգ է սպառնում: Այն գտնվում է Վատիկանում: Տաճարի կառուցումը տևել է 1506-1626 թվականները: Առաջին ճարտարապետը եղել է վերածննդի հայտնի ճարտարապետ Բրամանտեն, որից հետո տաճարի կառուցման վրա աշխատել են բազմաթիվ ճարտարապեներ, այդ թվում Ռաֆայելը և Միքելանջելոն: Տաճարամերձ հրապարակը կառուցվել է ճարտարապետ, քանդակագործ Բերնինիի նախագծով:

42. Սուրբ Մարկոսի տաճարը Վենետիկում

Սուրբ Մարկոսի տաճարի կառուցումը սկսվել է 11-րդ դարում: Այս տաճարն ունի հինգ գմբեթներ՝ խաչաձև դասավորությամբ: Այդ հինգ գմբեթներն այնպես են խմբավորված, որ կենտրոնական ավելի բարձր և մեծ գմբեթը դառնում է դոմինանտ, իշխող մյուսների նկատմամբ: Կառուցումը սկսվել է բյուզանդական շրջանում, սակայն ավարտվել է ավելի ուշ և հատկապես արտաքին հարդարանքում կրում է գոթական ոճին բնորոշ դեկորատիվություն: Ներքին պատերի հարդարանքում կարևոր դեր են խաղում բյուզանդական խճանկարները:

---

43. Լուվրի թանգարանը

Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Օգոստոսը 1190 թվականին Սենա գետի ափին կառուցում է Լուվր ամրոցը, որտեղ 1317 թվականին տեղափոխվում է թագավորական գանձարանը և այն դառնում է թագավորական նստավայր: 1528 թվականին Ֆրանցիսկ I արքան քանդում է ամրոցը և 1546 թվականին սկսում է ամրոցի վերակառուցումը՝ որպես թագավորական ճոխ նստավայր: Այն վերակառուցվում է վերածննդի ոճով: Որպես թանգարան հանդիսավոր բացումը տեղի է ունենում 1793 թվականի օգոստոսի 10-ին: Սկզբում թանգարանը ծառայում է որպես արվեստագետների կրթարան: Լուվրը իր հավաքածուով աշխարհի հռչակավոր թանգարաններից է, իսկ մակերեսով՝ Փարիզի ամենամեծ թանգարանը : Լուվրում ներկայացված ստեղծագործությունները բազմազան են՝ նկարներ, քանդակներ, կերամիկական ստեղծագործություններ, հնէաբանական գտածոներ, արվեստի ստեղծագործություններ, դեկորատիվ կիրառական արվեստ և այլն:

44. Սֆինքսը

Սֆինքսը դա կնոջ գլխով, առյուծի մարմնով ու թաթերով, արծվի թևերով, ցլի պոչով դիցաբանական արարած է: Աշխարհի տարբեր մասերում կան Սֆինքսի պատկերով արձաններ, դրանցից ամենահայտնին եգիպտական մեծ սֆինքսն է, որը կառուցված է Քեոփսի բուրգի հարևանությամբ: Սֆինքսի արձանը կերտված է ամբողջական կրաքարե ժայռից, ունի 60 մետր երկարություն և 20 մետր բարձրությունը:

45. Վերսալի պալատը

Վերսալի պալատը իր հայտնի այգիով առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն Ֆրանսիական, այլ ողջ արևմտաեվրոպական ճարտարապետության ուշ ֆեոդալիզմի շրջանի հուշարձանների մեջ: Վերսալի պալատական համալիրի կառուցման սկիզբը 17-րդ դարի 20-ական թվականներն են, սակայն հիմնականում կառուցվել է ավելի ուշ: Լյուդովիկոս XIV–ը չբավարարվելով Փարիզի քաղաքային միջավայրում տեղակայված Լուվրի պալատական համալիրից, որոշում է քաղաքից հեռու, ավելի հանգիստ բնության գրկում ստեղծել պալատ, որտեղ իրեն ավելի վստահ և ուժեղ կզգա: Պալատը կառուցվել է երեք փուլով: Սակայն Վերսալի ամրոցի անբաժանելի մասն է կազմում այգին, որը ստեղծվել է հրաշալի վարպետի՝ Ճարտարապետ-այգեգործ Անդրե Լենոտրի կողմից:

46. Պետերգոֆի պալատը

Պետերգոֆի պալատների և այգիների համալիր հիմնվել և կառուցվել են Պետրոս I-ի և ճարտարապետ Ժան-Բատիստ Լեբլոնի կողմից: Այն գտնվում է Սանկտ Պետերբուրգի Պետերգոֆ արվարձանում: 1715 թվականին Պետրոս I-ը որոշում է կառուցել ֆրանսիական Վերսալի նման պալատների և այգիների միություն: Տարածքի բարձր դիրքի պատճառով շատրվանների կառուցումը շատ դժվարացավ, քանի որ ջուրը բարձրացնելու համար մեծ աշխատանք էր պահանջվում, սակայն Պետրոս I-ի կամքին հակառակ ոչ ոք չէր կարող գնալ: Այն երբեմն անվանվում է ռուսական Վերսալ: Կայսեր կառավարումից հետո հետագա կայսրերն ու կայսրուհիները Պետերգոֆը ավելի էին շքեղացնում: 1918 թվականի հեղափոխությունից հետո Պետերհոֆը վերածվեց թանգարանի:

47. Թաջ Մահալ դամբարանը

Թաջ Մահալի տաճարը կառուցվել է Հնդկաստանի Ագրա քաղաքում՝ 1632-1653 թվականներին: Այս հուշարձան-դամբարանը կառուցել է Մեծ Մողոլների դինաստիայի կայսր Շահ Ջահանը իր սիրելի կնոջ՝ Մումթազ Մահալի հիշատակին: Ի դեպ, տեղեկություններ կան այն մասին, որ Մումթազ Մահալը հայուհի է եղել, և կայսերական արքունիքում նա է ներդրել Մարաշի ասեղնագործությունը: Կնոջ անժամանակ մահից որոշ ժամանակ անց Ագրայում՝ Մոնղոլական կայսրության մայրաքաղաքում սկսվում է Մումթազի դամբարանի շինարարությունը, որը տևում է 22 տարի: Այս կոթողն ամբողջությամբ կառուցված է ձյունասպիտակ մարմարից: Շահ Ջահանի մահից հետո նրան թաղում են նույն դամբարանում՝ իր սիրած կնոջ կողքին:

48. Էյֆելյան աշտարակ

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզի խորհրդանիշ հանդիսացող Էյֆելյան աշտարակը կառուցվել է 1887-1889 թվականներին: Աշտարակը, որը նախագծվել և իրականացվել է ֆրանսիացի տաղանդավոր ճարտարագետ Ալեքսանդր Գուստավ Էյֆելի և իր գործընկերների կողմից, կառուցման պահին մոլորակի ամենաբարձր շինությունն էր՝ 300 մետր բարձրությամբ: Այժմ նրա բարձրությունն ալեհավաքի հետ կազմում է 330 մետր:

---

49. Սագրադա Ֆամիլիա

Իսպանիայի Բարսելոնա քաղաքում գտնվող Սուրբ Ընտանիքի քավության տաճարի (իսպ.՝ Temple Expiatori de la Sagrada Família) շինարարությունը կատալոնացի հանճարեղ ճարտարապետ Անտոնիո Գաուդիի նախագծով սկսվել է դեռևս 1882 թվականին և շարունակվում է մինչ օրս: Իսպանիայի կառավարության տվյալների համաձայն տաճարի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականին

50. Ուղղահայաց անտառ բնակելի շենքեր

Ուղղահայաց անտառ կոչվող (իտ.՝ Bosco Verticale), յուրօրինակ ճարտարապետությամբ աչքի ընկնող երկու բնակելի շենքերը գտնվում են Իտալիայի Միլան քաղաքում: Աշտարակների ճակատների վրա տեղակայված են ավելի քան 900 ծառ, 5000 թուփ և այլ բույսեր: Նախագծի հեղինակներն են իտալացի ճարտարապետներ Ստեֆանո Բոերին, Ջանանդրեա Բարրեկան և Ջովանի Լա Վարրան: Աշտարակները կառուցվել են 2010-2014 թվականներին:

---

51. Մարինա Բեյ Սենդս

Մարինա Բեյ Սենդս-ը, բազմաֆունկցիոնալ համալիր է Սինգապուրի կենտրոնական հատվածում: Այն ներառում է հյուրանոց, թանգարաններ, ցուցասրահներ, խանութներ, թատրոններ, ռեստորաններ, լողավազան, աշխարհի ամենամեծ խաղատունը և այլն: Համալիրը նախագծել է ճարտարապետ Մոշե Սաֆդին: Մարինա Բեյ Սենդս համալիրը բացվել է 2011 թվականին:

52. Սողոմոն Գուգենհայմի թանգարան

Սողոմոն Գուգենհայմի թանգարանը գտնվում է Նյու Յորքում, ԱՄՆ: Այն հիմնադրվել է 1937 թվականին Գուգենհայմի հիմնադրամի շնորհիվ, իսկ թանգարանի շենքի հեղինակն է ամերիկացի ականավոր ճարտարապետ Ֆրենկ Լլոյդ Ռայթը: Թանգարանի կառուցվել է 1957-1959 թվականներին:

---

53. Բուրջ Խալիֆա

Բուրջ Խալիֆան երկնաքեր է Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում: Կառուցվել է 2004-2010 թվականներին: Բուրջ Խալիֆան համարվում է ամենաբարձր կառույցն ամբողջ աշխարհում: Նրա բարձրությունը 828 մետր է, հարկերի քանակը՝ 163: Նախագծի հեղինակն է ամերիկացի ճարտարապետ Ադրիան Սմիթը:

54. Միլայի տուն

Միլայի տունը (իսպ.՝ Casa Milà) բնակելի շենք է Իսպանիայի Բարսելոնա քաղաքում: Այն կառուցվել է 1906-1910 թվականներին ճարտարապետ Անտոնիո Գաուդիի կողմից Միլա ազգանունը կրող ընտանիքի պատվերով:

---

55. Պոմպիդու կենտրոն

Ժորժ Պոմպիդուի անվան արվեստի և մշակույթի ազգային կենտրոնը գտնվում է Փարիզում: Կենտրոնի բացումը տեղի է ունեցել 1977 թվականին: Այս նորարարական կառույցի հեղինակներն են բրիտանացի ճարտարապետ Ռիչարդ Ռոջերսը և իտալացի ճարտարապետներ Ռենցո Պիանոն ու Ջանֆրանկո Ֆրանչինին:

56. «Տուն ջրվեժի վերևում»

«Տուն ջրվեժի վերևում» (անգլ.՝ Fallingwater): Կառուցվել է Կաուֆման ընտանիքի պատվերով 1936-1939 թվականներին հարավարևմտյան Փենսիլվանիայում, ԱՄՆ: Կառույցի հեղինակն է 20-րդ դարի վաստակաշատ ամերիկացի ճարտարապետ Ֆրենկ Լլոյդ Ռայթը: Տան անվանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս կառուցվել է անմիջապես փոքր ջրվեժի վրա՝ բնական շատ գեղատեսիլ տեղանքում:

---

57. Մերի Էքս երկնաքեր

Մերի Էքս աշտարակը Լոնդոնի կենտրոնում գտնվող 41 հարկանի երկնաքեր է: Այն կառուցվել է 2001-2004 թվականներին: Նախագծվել է հանրահայտ բրիտանացի ճարտարապետ Նորման Ֆոսթերի կողմից: Աշտարակի բարձրությունը 180 մետր է:

58. Ազատության արձան

Ազատության արձանը (անգ.՝ Statue of Liberty) տեղակայված է Նյու Յորքի Մանհեթեն կղզուց 3 կմ դեպի հարավ-արևմուտք գտնվող Լիբերթի Այլենդ կղզում: Ամերիկայի Միացյալ Նահանգները նվեր է ստացել արձանը Ֆրանսիայի ժողովրդից: Արձանն իրականացվել է ֆրանսիացի քանդակագործ Ֆրեդերիկ Օգյուստ Բարտոլդիի ղեկավարությամբ 1876-1886 թվականներին: Արձանը համարվում է Միացյալ Նահանգների և ազատության խորհրդանիշ:

---

59. Էմփայր Սթեյթ Բիլդինգ

Էմփայր Սթեյթ Բիլդինգը 102 հարկանի երկնաքեր է Նյու Յորք քաղաքում՝ Մանհեթեն կղզում: Կառուցվել է 1930-1931 թվականներին: Նախագիծն իրագործել է Shreve, Lamb and Harmon ճարտարապետական ընկերությունը: Գլխավոր ճարտարապետն էր Վիլլիամ Լամբը:

60. Ջրային սպորտաձևերի կենտրոն Լոնդոնում

Լոնդոնի արևելյան մասում գտնվող ջրային սպորտաձևերի կենտրոնի կառուցումը սկսվել է 2008 թվականին և ավարտվել՝ 2011-ին: Կենտրոնը ներառում է 50 մետր երկարությամբ երկու փակ և մեկ 25 մետր երկարությամբ լողավազաններ: Նախագիծը մշակվել է հանրահայտ ճարտարապետ Զահա Հադիդի կողմից:

---

61. Բիլբաոյի Գուգենհայմ թանգարան

Իսպանիայի և աշխարհի՝ ժամանակակից արվեստի ամենամեծ թանգարաններից մեկը՝ Բիլբաոյի Գուգենհայմ թանգարանի բացումը տեղի է ունեցել 1997 թվականին: Յուրօրինակ ճարտարապետությամբ աչքի ընկնող այս կառույցի հեղինակն է մեր ժամանակների խոշորագույն ճարտարապետ Ֆրենկ Գերին:

62. Պարող տուն

Պարող տունը գրասենյակային շենք է Չեխիայի մայրաքաղաք Պրահայում: Նախագծի հեղինակներն են ճարտարապետներ Վլադո Միլունիչը և Ֆրենկ Գերին: Շենքը կառուցվել է 1994-1996 թվականներին:

---

63. Սիդնեյի օպերային թատրոն

Ավստրալիա մայրցամաքի ամենահայտնի կառույցը՝ օպերային թատրոնը, գտնվում է Սիդնեյ քաղաքում: Բազմաֆունկցիոնալ երաժշտական թատրոնի կառուցումը տևել է 14 տարի (1959 – 1973 թվականներ): Նավի առագաստներ հիշեցնող այս եզակի կառույցի նախագծի հեղինակն է դանիացի ճարտարապետ Յորն Ուդզոնը:

64. Չինաստանի Կենտրոնական հեռուստատեսության գլխավոր գրասենյակ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կենտրոնական հեռուստատեսության գլխավոր գրասենյակի շենքը գտնվում է մայրաքաղաք Պեկինում: Շենքը նախագծել են հոլանդացի ականավոր ճարտարապետ Ռեմ Կոլհասը և գերմանացի ճարտարապետ Օլե Շերենը: Շինարարական աշխատանքները սկսվել են 2004 թվականին և ավարտվել՝ 2009-ին:

---

65. Վիեննայի Տնտեսագիտական համալսարանի գրադարանի շենքը

Վիեննայի Տնտեսագիտական համալսարանի նոր գրադարանի և ուսումնական կենտրոնի՝ շքեղ օվկիանոսային նավ հիշեցնող շենքը նախագծել է ճարտարապետ Զահա Հադիդը: Շենքի բացումը տեղի է ունեցել 2013 թվականին:

66. Աբու Դաբիի Լուվր

Աբու Դաբիի Լուվրը Արաբական Միացյալ Էմիրությունների մայրաքաղաք Աբու Դաբիի Սաադիյաթ կղզում գտնվող թանգարան է՝ ճարտարապետական ժամանակակից յուրահատուկ նախագծով: Կառույցի շինարարական աշխատանքները սկսվել են 2009 թվականին, իսկ 2017-ին կայացել է թանգարանի բացումը: Կառույցի հեղինակն է ֆրանսիացի ճարտարապետ Ժան Նուվելը:

67. Պեկինի Ազգային մարզադաշտ

Չինաստանի մայրաքաղաք Պեկինում գտնվող Ազգային մարզադաշտը բազմաֆունկցիոնալ ժամանակակից սպորտային համալիր է: Այն հայտնի է «Թռչնի բույն» անունով, քանի որ արտաքին տեսքը ճյուղերից հյուսված թռչնի բնի է նման: Շինարարական աշխատանքները պաշտոնապես մեկնարկել են 2004 թվականին և ավարտվել են 2008 թվականին: Մարզադաշտի նախագիծը մշակվել է շվեյցարական «Herzog & de Meuron Architekten» նախագծային ընկերության և չինացի ճարտարապետների խմբի կողմից:

---

68. Բրազիլիայի Ազգային կոնգրեսի պալատ

Բրազիլիայի Ազգային կոնգրեսի պալատը գտնվում է մայրաքաղաք Բրազիլիայում: Այս յուրահատուկ կառույցի հեղինակն է բրազիլական արդի ճարտարապետության հիմնադիր Օսկար Նիմեյերը: Կառուցվել է 1958-1960 թվականներին:

69. Քրայսլեր բիլդինգ

1930 թվականին մեքենաշինական «Քրայսլեր» կորպորացիայի պատվերով կառուցված այս գրասենյակային շենքը հանդիսանում է Նյու Յորքի խորհրդանիշներից մեկը: 77 հարկանի այս երկնաքերի բարձրությունն է 319 մետր: Շենքի նախագծող և պատասխանատու ճարտարապետն էր Ուիլյամ վան Ալենը:

---

70. Ուոլթ Դիսնեյի համերգասրահ

Ուոլթ Դիսնեյի համերգասրահը գտնվում է Լոս Անջելես քաղաքում, ԱՄՆ: Շենքը նախագծել է ճարտարապետ Ֆրենկ Գերին: Համերգասրահի բացումը տեղի է ունեցել 2003 թվականին:

71. «The Shard»

«The Shard»-ը 87 հարկանի երկնաքեր է Լոնդոնում: Երկնաքերը ստացել է «Shard» անունը, որը նշանակում է «բեկոր»: Այն երեսպատված է հազարավոր ապակյա պանելներով, որոնք փայլում են արևի ճառագայթների ներքո: «The Shard»-ը Մեծ Բրիտանիայի ամենաբարձր շենքն է, իսկ Եվրոպայում՝ յոթերորդը բարձրությամբ: Բացման արարողությունը տեղի է ունեցել 2012 թվականին: Իտալացի ճարտարապետ Ռենցո Պիանոն իր ստեղծագործությունն անվանում է «ուղղահայաց քաղաք»: Մեծ Բրիտանիայի ամենաբարձր դիտահարթակն ու պատկերասրահը գտնվում են շենքի վերջին հարկում:

---

72. «The Ascent» բնակելի շենք

«The Ascent» (թարգմանաբար՝ «Վերելք») անվանմամբ, ժամանակակից դիզայնով աչքի ընկնող այս բնակելի շենքը գտնվում է ԱՄՆ-ի Օհայո նահանգի Ցինցինատի քաղաքում՝ Ջոն Ռյոբլինգի կախովի կամրջի հարևանությամբ: 22 հարկանի շենքի հեղինակն է ճարտարապետ Դենիել Լիբեսկինդը: Կառուցվել է 2005-2008 թվականներին:

73. «Ալյանց Արենա» ֆուտբոլային մարզադաշտ

Մարզադաշտը գտնվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մյունխեն քաղաքում: Ալյանս Արենայի կառուցման շնորհիվ քաղաքը ստացել է ոչ միայն ֆուտբոլային մարզադաշտ, այլ նաև նոր խորհրդանիշ՝ ճարտարապետության իսկական մարգարիտ: 75,000 հանդիսատեսի համար նախատեսված մարզադաշտի հեղինակներն են շվեյցարացի ճարտարապետներ Ժակ Հերցոգը և Պիեռ դե Մեուրոնը: Մարզադաշտի բացումը տեղի է ունեցել 2005 թվականին:

---

74. «Գազպրոմ Արենա» մարզադաշտ

«Գազպրոմ Արենա» կամ «Սանկտ Պետերբուրգ» ֆուտբոլային մարզադաշտը գտնվում է Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում՝ Կրեստովսկի կղզու վրա: Նախագծի հեղինակը ճապոնացի ճարտարապետ Կիշո Կուրոկավան է: Մարզադաշտը նախատեսված է 68,000 հանդիսատեսի համար: Բացումը տեղի է ունեցել 2017 թվականին:

Բովանդակություն

1. Գառնիի տաճար 1
2. Էջմիածնի մայր տաճարը 1
3. Սուրբ Հռիփսիմե եկեղեցին 2
4. Զվարթնոցի տաճարը 2
5. Ամբերդ ամրոցը 3
6. Կեչառիսի վանական համալիրը 3
7. Գեղարդի վանական համալիրը 4
8. Հաղպատի վանական համալիրը 4
9. Նորավանք վանական համալիրը 5
10. Տաթևի վանական համալիրը 5
11. Խոր Վիրապի վանքը 6
12. Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցին 6
13. Կառավարական շենքը 7
14. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը 7
15. Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը 8
16. Կասկադ համալիրը 8
17. Երիտասարդական մետրոյի կայարանը 9
18. Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը (Ծիծեռնակաբերդ) 10
19. Արարատ տրեստի գինու գործարանը 10
20. Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը 11
21. Մատենադարանի շենքը 11
22. Կոնյակի գործարանի շենքը 12
23. Երևանի «Այրարատ» (Ռոսիա) կինոթատրոնը 12
24. Ազգային ժողովի շենքը 13
25. Երևանի Քաղաքապետարանի շենքը 13
26. Երիտասարդական պալատը 14
27. Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համլիր 14
28. «Մոսկվա» կինոթատրոնի շենքը 15
29. «Մայր Հայաստան» հուշարձանը Գյումրիում 15
30. Կամերային համերգասրահ 16

31. Քեոփսի բուրգը. 17
32. Ստոունհենջ 17
33. Աթենքի ակրոպոլիսը 18
34. Պարթենոնի տաճարը 19
35. Կոլիզեումի ամֆիթատրոնը Հռոմում 19
36. Սուրբ Ղազար կղզին 20
37. Պիզայի աշտարակը 20
38. Փարիզի Աստվածամոր տաճարը 21
39. Տրևի շատրվանը Հռոմում 21
40. Անգլիական գոթական Յորքի տաճարը 22
41. Սուրբ Պետրոսի տաճարը 22
42. Սուրբ Մարկոսի տաճարը Վենետիկում 23
43. Լուվրի թանգարանը 23
44. Սֆինքսը 24
45. Վերսալի պալատը 25
46. Պետերգոֆի պալատը 26
47. Թաջ Մահալ դամբարանը 27
48. Էյֆելյան աշտարակ 28
49. Սագրադա Ֆամիլիա 28
50. Ուղղահայաց անտառ բնակելի շենքեր 29
51. Մարինա Բեյ Սենդս 29
52. Սողոմոն Գուգենհայմի թանգարան 30
53. Բուրջ Խալիֆա 30
54. Միլայի տուն 31
55. Պոմպիդու կենտրոն 31
56. «Տուն ջրվեժի վերևում» 32
57. Մերի Էքս երկնաքեր 32
58. Ազատության արձան 33
59. Էմփայր Սթեյթ Բիլդինգ 33
60. Ջրային սպորտաձևերի կենտրոն Լոնդոնում 34
61. Բիլբաոյի Գուգենհայմ թանգարան 34
62. Պարող տուն 35
63. Սիդնեյի օպերային թատրոն 35
64. Չինաստանի Կենտրոնական հեռուստատեսության գլխավոր գրասենյակ 36
65. Վիեննայի Տնտեսագիտական համալսարանի գրադարանի շենքը 36

66. Աբու Դաբիի Լուվր 37
67. Պեկինի Ազգային մարզադաշտ. 38
68. Բրազիլիայի Ազգային կոնգրեսի պալատ 38
69. Քրայսլեր բիլդինգ 39
70. Ուոլթ Դիսնեյի համերգասրահ 39
71. «The Shard» 40
72. «The Ascent» բնակելի շենք 40
73. «Ալյանց Արենա» ֆուտբոլային մարզադաշտ 41
74. «Գազպրոմ Արենա» մարզադաշտ 41

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հարությունյան Վ. Մ. Հայկական ճարտարապետության պատմություն. - Եր.: Լույս հրատ., 1992. - 632 էջ:
- Մ.Ա. Գասպարյան, Երևանի արդի ճարտարապետության ձևավորման ուղղությունները /Մենագրություն/: Երևան, ՃՇՀԱՀ, 2022, 175 էջ:
- М.М. Асратян, Армянская архитектура раннего христианства. Москва, Инкомбук, 2000, 400
- Григорян А. Г., Товмасян М. Л. Архитектура Советской Армении. – М.: Стройиздат, 1986. - 318 с.
- Г.Г. Рашидян, Главная площадь Еревана во времени и в пространстве. ЕГУАС, Ереван, 2007, 155 с.
- Հարությունյան Վ.Մ. Հին աշխարհի ճարտարապետություն.-Եր.: Լույս հրատ.,1978. - 320 էջ:
- Հարությունյան Վ.Մ. Գեղեցիկի զարմանահրաշ քառուղիներում.-Երևան: Անահիտ հրատ., 1999. - 248 էջ.
- Всеобщая история архитектуры, (в 2-х томах), т. 1, М.: Госстройиздат, 1958. - 686 с.
- Всеобщая история архитектуры, (в 2-х томах), т. 2, М.: Госстройиздат, 1963. – 723 с.
- Шуази О. История архитектуры (в 2-х томах). М.: Издательство В. Шевчук, 2009.- 1300 с.
- Шуази О. История архитектуры. -, (в 2-х томах), том 1, М.: Изд-во Всес. Акад. арх-ы, 1935 г., 575 стр.
- Шуази О., История архитектуры, (в 2-х томах), том 2. – М.: Изд-во Всес. Акад. арх-ы, 1937. - 694 с.5.
- Banham, Reyner. Theory and Design in the First Machine Age, The MIT Press; 2nd edition, 338 p., 1980.
- Benevolo, Leonardo. History of Modern Architecture, The MIT Press Cambridge Massachusetts, 2 vols., 868 p.,1977.
- **Bergdoll, Barry.** European Architecture 1750-1890 (Oxford History of Art) 1st Edition, Oxford University Press; 1st edition, 336 p., 2000.
- **Ching, Fransis.** A Visual Dictionary of Architecture, Wiley; 1st Edition, 320 p., 1996.
- Cohen, Jean-Louis. The Future of Architecture since 1889: A Worldwide History, Phaidon Press; Reprint edition, 528 p., 2016.
- Collins, Peter. Changing Ideals in Modern Architecture 1750-1950, McGill-Queen's University Press; 2nd edition, 308p., 1998.
- Colquhoun, Alan. Modern Architecture, Oxford University Press, 287 p., 2002.

- Curtis, William. *Modern Architecture Since 1900,* Phaidon Press; 3rd Revised ed. Edition, *636 p.,* 1996.
- Davies, Colin. A New History of Modern Architecture, Laurence King Publishing, 496 p., 2017.
- Doordan, Dennis. Twentieth - Century Architecture, Pearson College Div, 304 p., 2001.
- Forty, Adrian. Words & Buildings: A Vocabulary of Modern Architecture, Thames & Hudson, 336 p., 2004.
- Giedion, Sigfried. Space, Time and Architecture, Harvard University Press; 1st edition, 601 p., 1941.
- Jencks, Charles. Modern Movements in Architecture, Garden City, N.Y., Anchor Press, 432 p., 1973.
- Tafuri, Manfredo. Modern Architecture, translated from Italian by Robert Erich Wolf, Published by New York : H. N. Abrams, 448 p., 1979.
- Pevsner, Nikolaus. Pioneers of Modern Design: from William Morris to Walter Gropius, Palazzo Editions; Revised and Expanded Edition, 192 p., 2011.
- Scully, Vincent. Modern Architecture: The Architecture of Democracy, New York, G. Braziller, 158 p., 1974.
- Weston, Richard. Modernism, Haidon Press; 1st edition, 240 p., 1996.
- Орельская О.В. Современная зарубежная архитектура, Москва, Издательский центр "Академия", 272 стр., 2006.
- Хассел Э., Бойл Д., Харвуд Дж. Современная архитектура, Изд: Арт-родник, 128 стр., 2010.